01.10.2024

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգարժան հայրենակիցներ, սիրելի մեծահասակներ, մեծագույն ակնածանքի արժանի տատիկներ ու պապիկներ

Ընդունեք ջերմագին շնորհավորանքներս Տարեցների միջազգային օրվա առթիվ:

Հայ հասարակության մեջ ընդգծված վերաբերմունք կա մեծահասակների նկատմամբ, որը խորհրդանշում է նրանց վաստակն ու նվիրումը, նրանց անփոխարինելի դերը, ստեղծած արժեքներն ու այդ արժեքների պահպանումը:

Մեր կողքին ապրող տարեցները վաստակել են պատշաճ ուշադրություն և հոգատար վերաբերմունք, նրանք իրենց ընտանիքների սյուներն են ու սերունդների համերաշխության արժեքների կրողը:

Մեծահասակների կյանքը բարեկեցիկ, խաղաղ և ապահով դարձնելու համար կարևորվում են այն բոլոր ծրագրերը, որոնց առանցքում առողջապահական, սոցիալական խնդիրներն են: Այս ծրագրերի իրականացումը պետք է լինի հասցեական և դառնա ապահով ծերության երաշխիքներից մեկը:

Կարծում եմ՝ մեծահասակների նկատմամբ ուշադրությունը պետք է լինի առավելագույնը, նրանց խնդիրները պետք է լինեն առաջնահերթ ու կարևորված, որը նաև հասարակության առողջ արձագանքն է տարեց սերնդի խնդիրների ու դրանց լուծման նկատմամբ:

Այսօր, քան երբևէ կարևորվում են մեր կողքին ապրող տարեցների հոգեկան հանգստությունը, ներքին խաղաղությունը, կենսապայմանների բարելավումը, որը պայմանավորված է նաև երիտասարդների վերաբերմունքով, կենսապայմանների բարելավմանը միտված ծրագրերով:

Սևան համայնքն էլ՝ ի դեմս տեղական իշխանության, անում է հնարավորը համայնքի տարեց բնակչության կյանքի որակը բարելավելու ուղղությամբ, պատրաստակամ է սոցիալական ծրագրերի միջոցով ապահովել բարեկեցիկ ու ապահով ծերություն, քանի որ մեզ համար մեծագույն պատասխանատվություն է և պատիվ վայելելու ավագ սերնդի ներկայացուցիչների ներկայությունը և կենսափորձը:

Հարգարժան մեծահասակներ,

Սիրելի տատիկներ ու պապիկներ

Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի, բնակավայրերի վարչական ղեկավարների, համայնքի ավագանու անունից ևս մեկ անգամ շնորհավորում եմ ձեզ, ձեր ներկայությամբ իմաստավորեք մեր կյանքը՝ փոխանցելով ձեր փորձն ու փորձառությունը:

Ցանկանում եմ, որպեսզի ձեր կյանքը վայելեք խաղաղ ու անվտանգ պայմաններում՝ շրջապատված ձեր զավակների, թոռների, հարազատների, շրջապատի սիրով և ջերմությամբ, հոգատարությամբ և ուշադրությամբ:

Սիրելի մեծահասակներ

Ապրեցեք երկար, առողջ, խաղաղ երկնքի տակ՝ վայելելով ապահով ու արժանապատիվ ծերություն: